«ՌՈՄԱՆՍԻԱԴԱ»
ՌՈՒՍԱԿԱՆ ՌՈՄԱՆՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ
ՄՈՍԿՈՎՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ

«Ռոմանսիադա» ռուսական ռոմանսի երիտասարդ կատարողների մոսկովյան միջազգային մրցույթի Հայաստանյան ընտրական փուլ՝ «Հայկական Ռոմանսիադա»-ն անց է կացվում 2020 թվականից «Ռոմանսիադա» ռուսական ռոմանսի պահպանման բարեգործական հիմնադրամի և Դոմ Մոսկվի» Երևանում Մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի նախաձեռնությամբ:

Մրցույթը անց է կացվում Հայաստանի երաժշտական ընկերության աջակցությամբ:

Մրցույթի հիմնական գաղափարը.

- ռոմանսի տարածումն է, որպես երաժշտական արվեստի տեսակներից մեկը,
- ռուսական ռոմանսի կատարողականության լավագույն ավանդույթների զարգացումը և շարունակականությունը,
- Ռուսաստանի նորահայտ տաղանդավոր արտիստների և օտարերկրյա պետությունների երիտասարդ կատարողների բացահայտում և ստեղծագործական աջակցություն,
- ժամանակակից կոմպոզիտորների ռոմանսի ներգրավում և ակտիվացում:

«Հայկական Ռոմանսիադա» մրցույթը այս տարի անց է կացվելու հոկտեմբերի 28-ին՝ «Դոմ Մոսկվի» Երևանում Մոսկովյան մշակութագործարարական կենտրոնում:

ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մրցույթի ընտրական փուլը կազմված է 4 փուլից. Անց է կացվում մեկ օր և ավարտվում է Գալա-համերգով, որի ընթացքում հանձնվում են մրցանակները, պատվոգրերը և պարգևները:

1-ին փուլ -դասական կոմպոզիտորի ռոմանս

2-րդ փուլ- ժամանակակից կոմպոզիտորի ռոմանս
3-րդ փուլ- այլ ժանրի ռոմանս (գնչուական, դերասանական և այլն)
4-րդ փուլ- ազգային ռոմանս

Գնահատվում է. Հեղինակային տեքստի ընթերցման խորությունը, ոճի ընկալումը, մասնագիտական հմտությունների տիրապետում, անհատականությունը:

Մրցույթի յուրաքանչյուր հաջորդ փուլին ռոմանսի կրկնությունը արգելվում է:

Երաժշտական նվագակցություն՝ դաշնամուր և կիթառ:

Մասնակիցների տարիքը՝ 17-ից 26 տարեկան.

- Թատրոնի և համերգային կազմակերպությունների երիտասարդ արտիստներ,
- ստեղծագործական ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ-եր, քոլեջներ) ուսանողներ:

«Հայկական Ռոմանսիադա» մրցույթի ժյուրին գլխավորում են Մշակույթի վաստակավոր գործիչ, Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը և «Ռոմանսիադա» ռուսական ռոմանսի միջազգային մրցույթի կազմակերպիչ, ՌԴ վաստակավոր գործիչ Գալինա Պրեոբրաժենսկայան:

Հաղթողներին կտրվեն պատվոգրեր, արժեքավոր և դրամական պարգևներ:

Միաժամանակ հայտնում ենք, որ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել առձեռն կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ մինչև ս. թ. հոկտեմբերի 20-ը, «Դոմ Մոսկվի» Երևանում Մոսկովյան մշակութագործարարական կենտրոն (0001, Երևան, Արգիշտի 7) կամ հետևյալ էլ փոստի հասցեով՝ info@dommoskvy.am, ինչպես նաև Հայաստանի երաժշտական ընկերություն (0001, Երևան, Սայաթ-Նովա 15) կամ msa.2001@mail.ru էլ. փոստի հասցեով: